ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 60-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 29-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի հոբելյանական նիստը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակին:

«Մեծ Հոկտեմբերը և գիտությունը» զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ասաց նա, համայն աշխարհի առաջադեմ մարդկությունը մեծ հանդիսավորությամբ նշեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձը: Տոնի նախօրյակին, համաժողովրդական քննարկումից հետո, ընդունվեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը՝ զարգացած սոցիալիստական հասարակության հիմնական օրենքը: Նոր սահմանադրությունը, ինչպես ընդգծեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկեր Լ. Ի. Բրեժնևը, սովետական պետության ամբողջ վաթսունամյա զարգացման խտացված արդյունքն է:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, որ մեր երկրի բոլոր ժողովուրդներին ազատագրեց դասակարգային և ազգային ճնշումից, այնուհետև ասաց ընկ. Վ. Համբարձումյանը, բաց արեց նրանց առջև սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացման լայն ճանապարհ: Միութենական բոլոր հանրապետություններում աննախընթաց վերելք է ապրում բարձրագույն կրթությունը, խորանում են գիտական հետազոտությունները: Այսօր սովետական սոցիալիստական յուրաքանչյուր հանրապետություն որոշակի ավանդ է ներդնում սովետական գիտության ընդհանուր գանձարանում: Մի քանի հանրապետություններում առաջացած գիտական դպրոցները և ուղղությունները ակնառու տեղ են գրավել համաշխարհային գիտության մեջ:

Սովետական Միության բոլոր հանրապետությունների ու հատկապես նրանց գիտնականների օգնության և իր մտավորականության անխոնջ ջանքերի շնորհիվ Սովետական Հայաստանը կարճ ժամանակամիջոցում դարձավ ժամանակակից գիտության օջախներից մեկը: Հանրապետությունում լայնորեն ծավալվեցին գիտական հետազոտությունները, ստեղծվեցին նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ և առաջին գիտա-հետազոտական ինստիտուտները: Վերջինների բոլոր ուժերը կենտրոնացվեցին այն պրոբլեմների լուծման վրա, որ առաջ էին քաշել հանրապետության ժողովրդական տնտեսությունն ու կուլտուրան: Որպես օրինակ կարելի է հիշատակել երկրաբանության, քիմիայի և պատմության ինստիտուտները:

Նախքան հանրապետության Ակադեմիայի հիմնադրումը մեզանում առավել զարգացման էին հասել հասարակական գիտությունները: Ակադեմիկոսներ Հակոբ Մանանդյանի, Հրաչյա Աճառյանի և Մանուկ Աբեղյանի անունները լայն համբավ էին վայելում սովետական ողջ գիտական հասարակայնության շրջաններում: Նրանց հիմնարար աշխատությունների և ստեղծած գիտական դպրոցների շնորհիվ հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի և հայ գրականության պրոբլեմների ուսումնասիրության գործը լրջորեն առաջ շարժվեց և հետագա զարգացման հիմք հանդիսացավ: Դեռևս այդ տարիներին մեր քիմիկոսներն ու երկրաբանները հսկայական օգնություն ցույց տվեցին հանրապետության արագորեն աճող ժողովրդական տնտեսությանը:

Հայաստանի արդյունաբերությունը աճում էր բարձր տեմպերով: Ստեղծվեցին առաջին մեքենաշինական ձեռնարկությունները, խոշոր քիմիական գործարանները և հզոր էլեկտրակայանները: Պարզվեց, որ ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը պահանջում է ամեն կերպ ընդլայնել բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների բնագավառում կատարվող աշխատանքները: Հայրենական մեծ պատերազմի սկսվելով այդ պահանջը էլ ավելի ակնհայտ դարձավ: Եվ երբ 1943 թ. նոյեմբերին, ի կատարումն հայ ժողովրդի վաղեմի իղձերի, հիմնադրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, նրա առջև անմիջապես խնդիր դրվեց նոր կարիքներին համապատասխան Հայաստանում ստեղծել ժամանակակից գիտական ուղղությունների կոմպլեքս:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հատկապես խոր կերպով էր գիտակցում, որ անհրաժեշտ է արագորեն զարգացնել ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական և տեխնիկական գիտությունները: Միաժամանակ հենց սկզբից ուղղություն վերցվեց այնպես անել, որ չկրկնվեն ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի համապատասխան հիմնարկությունների աշխատանքները և ամեն մի գիտության բնագավառում ունենալ սեփական, թեկուզև նեղ, բայց ինքնուրույն պրոֆիլ:

Կարելի է հաստատապես ասել, որ Հայրենական պատերազմի ծանր տարիներին ստեղծված մեր երիտասարդ ակադեմիան իր աշխատանքներում հիմնականում իրականացրեց այդ գլխավոր գիծը:

Այնուհետև ընկ. Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ Սովետական Հայաստանի գիտության զարգացման կարևորագույն փուլերի վրա, խոսեց հայ գիտնականների այն ավանդի մասին, որ նրանք ներդրել են հայրենական գիտության զարգացման գործում:

«Մեծ Հոկտեմբերը և հայ ժողովրդի վերածնունդը» զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, հանրապետության գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը:

Ընդհանուր ժողովի հոբելյանական նիստին ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Պ. Պ. Անիսիմովը, Հ. Մ. Ոսկանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվետլովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Հոկտեմբերի 25—27-ը Երևանում տեղի ունեցավ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը» թեմայով գիտական կոնֆերանս, որը անցկացրին ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիաները, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմություն» կոմպլեքսային թեմայի գիտական խորհուրդը և նրա հայկական սեկցիան, սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների բազմակողմանի գիտական համագործակցության «Մեծ Հոկտեմբերի պատմությունը և ներկա սոցիալիստական հեղափոխությունները» պրոբլեմային հանձնաժողովը:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, հանրապետության Գերագույն սովետի նախագահության և կառավարության անունից գիտական կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաքյանը:— Կոնֆերանսն իր աշխատանքը սկսում է նշանակալից ժամանակաշրջանում,—ասաց նա: Վերջերս ընդունվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության նոր սահմանադրությունը: Հատկանշական է, որ մեր կյանքի նոր հիմնական օրենքն ընդունվեց Մեծ Հոկտեմբերի 60-ամյակի նախօրեին: Դա բնավ ժամանակի երկու խոշորագույն իրադարձությունների սոսկական զուգադիպություն չէ, այլ փայլուն վկայությունն այն բանի, որ Հոկտեմբերի գաղափարները, Լենինի պատգամները հաջողությամբ կենսագործվում են: Անդրադառնալով մեր երկրում ազգային հարցի լուծմանը, ընկ. Դալլաքյանը նշեց, որ սովետական բոլոր ժողովուրդների, երկրի բոլոր ազգերի և ազգությունների համար միավորիչ հզոր հիմք են դարձել նրանց պատմական ճակատագրերի ընդհանրությունը, համատեղ հեղափոխական ավանդույթները, հայացքները, կենսափորձը, որոնք ծնունդ են առել համատեղ պայքարում և համատեղ աշխատանքով: Ինչպես նշել է ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը, այնուհետև ասաց ընկեր Դալլաքյանը, ՍՄԿԿ-ն և սովետական պետությունը «լիովին են լուծել ազգային հարցը նրա այն կողմերով, որոնցով մեզ ժառանգություն էր մնացել նախահեղափոխական անցյալից: Բայց ազգային հարաբերությունները հասուն սոցիալիզմի հասարակության մեջ էլ մի այնպիսի իրողություն են, որ մշտապես զարգանում են, առաջադրում նոր պրոբլեմներ ու խնդիրներ: Կուսակցությունը մշտապես այդ հարցերը պահում է տեսադաշտում, ժամանակին լուծում դրանք՝ ելնելով ամբողջ երկրի և